ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3. 1962 Общественные науки

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ռուզան Դանիելյան

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ

Ստեփանոս Նազարյանը հայ հասարակական մտքի խոշոր ներկայացուցիչներից մեկն է։ Նա հանդես եկավ մեր քաղաքական կյանքի բեկման կարևորագույն շրջաններից մեկում, իր նոր սկզբունքներով և բուռն գործունեությամբ նպաստեց նրա պատմական զարգացմանը։ Բերեն գիտնական, մանկավարժ, հրապարակախոս և խմբագիր նա գլխավոր հարվածն ուղղեց հայ կղերա-ֆեոդալական մտայնության դոգմաների դեմ, դրանք իջեցրեց իրենց սրբագործված պատվանդաններից և փոխարենը կյանքի մեջ մտցրեց ազգային ինքնաճանաչումը բացահայտող և խորացնող նոր գաղափարներ, որոնք բխում էին հայ ժողովրդի զարթոնքի և նրա վերածննդի կենսական պահանջներից։

Գլխավոր նպատակ համարելով լուսավորությունը, Նազարյանը առաջ քաշեց ժողովրդական կրթության, լուսավորության, գիտության նվաճումների բազմակողմանի յուրացման, հայ ժողովրդի քաղաքական զարգացման հարցերը, որոնք պետք է ազգը ազատագրեին հին նախապաշարումներից, «ասիական» բռնությունից, կամայականություններից, ապահովեին անհատի ազատությունը և նրա կյանքի բարօրությունը։

Նազարյանի հայրենասիրական գործունեությունն անցել է պայքարի դժվարագույն ուղիներով։ Խավարի ուժերը գործադրել են բոլոր միջոցները խափանելու նրա ձեռնարկումները։ Նրա խմբագրած «Հյուսիսափայլը» ենթարկվել է բազմատեսակ հալածանքների և՛ հոգևոր իշխանության, և՛ աղայական դասի, և՛ ցարական գրաքննության, և՛ երրորդ բաժանմունքի կողմից։ Բայց նա իր մեծ իմացությամբ, սկզբունքայնությամբ և մեծ կամքի ուժով պայքարել է լույսի, քաղաքակրթության, ազատության թշնամիների դեմ, օգնել է քաղաքական-հասարակական նոր ուժերի խմբավորմանը։ Նրա դավանած գաղափարները ժամանակակիցները ընկալել են իբրև «նոր ուղղություն» և համախմբվել նրա շուրջը՝ հինը կործանելու և պրոգրեսիվ գաղափարները կյանքի մեջ մտցնելու համար։

Իր ամբողջ կյանքի ընթացքում անսասան կերպով պայքարելով իր գաղափարական հակառակորդների դեմ, Նազարյանը մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց այն մեծ հավատին, որ «կգա լավ ժամանակ, երբ աչքն ավելի պարզ կտեսնե ճշմարտությունը և սիրտն ավելի ուժգին կզգա բարին ու գեղեցիկը»[1]։ Դորպատում Աբովյանի հետ ծրագրելով՝ ազգային կյանքի վերափոխման խնդիրները, նա համոզված էր նրա հաղթանակին և այն բանին, որ «երախտագետ հետնորդները մեզ կգնահատեն և մեզ կնայեն զարմացած

---

[1] Դիվան Խ. Աբովյանի, 1940, հ. 1, էջ 255։

հայացքով, որպես հայրենյաց մաքուր սիրո զովելի օրինակների վրա»[2], ինչպես գրում է Արովյանին ուղղված նամակում։

Նազարյանի գաղափարները ոչ միայն նպաստեցին XIX դարի առաջին կեսի հայ հասարակական կյանքի վերածննդին, այլև ճանապարհ հարթեցին հետագա տասնամյակների ազգային-լուսավորական շարժման համար և բարձր գնահատականի արժանացան նրա անմիջական հետնորդների կողմից։

* * *

Նազարյանը թողել է հարուստ ժառանգություն, դրա հետ և մեծ քանակությամբ նամակներ։ Դրանց մի զգալի մասը տպագրվել է նախասովետական մամուլում, իսկ մի մասը դեռևս անտիպ պահվում է Մոսկվայի, Լենինգրադի, Կազանի, Տարտուի, Երևանի պետական արխիվներում, ինչպես նաև մասնավոր մարդկանց մոտ։ Շատ նամակներ համարվում են կորած կամ դեռ չհայտնաբերված։

Մեր ձեռքի տակ եղած մոտ 260 նամակների մեջ բացվում են հեղինակի 1829—1879 թվականներին անցած անձնական և հասարակական կյանքի բազմաթիվ էջերը՝ հարուստ ու բազմազան, լի փոթորկոտ բախումներով, աննկուն պայքարի և լուսավորական գաղափարների հաստատման համար գործադրած հերոսական դրվագներով։ Այդ էջերը միաժամանակ բացում են մեր ժողովրդի իրրև ազգի կազմավորման հետաքրքրական շրջաններից մեկը՝ իր բարդ անցումների և հակասությունների հետ միասին։

Նազարյանի հասարակական հայացքները կազմակերպված ձևով առաջին անգամ երևան են գալիս նամակներում։ Սկսած ուսանողական տարիներից, ոգեշնչված հայրենասիրական մեծ գաղափարներով նա իր հերթին ներշնչում է իր մտերմին Խ. Աբովյանին՝ կղերա-ավատական դասի դեմ սկսած պայքարում լինել անզիջում։ «Մենք տեսնում ենք սիրելի Արովյան,— գրում է նա 1836 թ. Դորպատից գրած նամակում,— որ յուրաքանչյուր ռեֆորմատոր մարդկային պատմության մեջ, ստիպված է եղել կռվել շատ բաների դեմ, չնայած որ շատերը ստիպված են եղել հպատակվել կարճատեսների կատաղությանը»։

Նամակների մեջ կոնկրետ առիթներով բացահայտվում են Նազարյանի այն մտքերը, որոնց ամբողջական ձևակերպումներին մենք առաջին անգամ հանդիպում ենք 1846 թվականին հրատարակած ռուսերեն աշխատության մեջ՝ «Обозрение Истории Гайканской письменности в новейшия времена» վերնագրով, իսկ այնուհետև, հաջորդ աշխատություններում և «Հյուսիսափայլ» ամսագրում։ Այստեղ խոսվում է աշխարհարար լեզվի կապակցությամբ իր ունեցած բախումների, ժողովրդական կրթության շուրջը եղած տարբեր կարծիքների, դաստիարակության, գիտության նվաճումներն ու եվրոպական քաղաքակրթությունը յուրացնելու, հակառակորդ ուժերի դեմ պայքար ծավալելու և գրականության ու գիտության կազմակերպման և այլ հարցերի մասին։ Նազարյանի այդ շրջանում մշակած սկզբունքներն ամբողջապես համընկնում են Արովյանի նամակներում և ուսումնասիրությունների մեջ արտահայտված սկզբունքներին՝ ազգային լուսավորական հարցերում։

1850-ական թվականներին գրած նամակների մեջ Նազարյանը երևում է իր գործունեության տարերքի մեջ։ Այստեղ մենք հանդիպում ենք նրա աշխար-

2 Նույն տեղում։

հայացքի ամենաուժեղ դրսևորումներին և միաժամանակ սահմանափակումնե-
րին։ Իսկ հետո՝ «Հյուսիսափայլի» հրատարակության ժամանակաշրջանում
երևում են Նազարյանի վրա ռևոլյուցիոն դեմոկրատ Նալբանդյանի հայացքների
ազդեցությունը, միաժամանակ նրանց համատեղ գործունեության դրական
արդյունքները գաղափարական հակառակորդների դեմ մղած պայքարում։

Նազարյանը նամակներում ցայտուն կերպով արտահայտում է իր տարա-
կուսանքները, դժգոհությունները, զայրույթն ու հուզմունքը հասարակական-քա-
ղաքական տարբեր երևույթների նկատմամբ։ Երբ նա գործ ունի իր գաղափա-
րական հակառակորդների հետ, նրա մոտ չկան չլուծված հարցեր։ Բայց Նազար-
յանը չի հասկանում, թե ինչո՞ւ, ասենք, հայ բուրժուազիան, որը դեր ունի
կատարելու ազգի հանդեպ, ոչ միայն չի կատարում, այլև վնասում է նրան,
ի՞նչու ցարական իշխանությունը, որ «բարեխնամ» դեր է ստանձնել հայությանը
ազատագրելով ասիական բարբարոսությունից, ձգտում է տարրալուծել ազգը
և այլն։ Այս հարցերը նրա մոտ 1860—70-ական թվականներին առաջացնում
են խորը հակասություններ։ Իր կյանքի վերջին տասնամյակի նամակներից
երևում է, որ նա դեռ ապրում է իր վաղեմի երազանքներով, սակայն, չի հաս-
կանում այլևս զարգացման այն պրոցեսը, որն ապրում էր հայությունը առևտ-
րական կապիտալի զարգացման նոր պայմաններում։ Նրա նամակների մեջ
տիրում է խորը թախիծ և հուսահատություն նոր եկող սերնդի, մարդկային նոր
հարաբերությունների հանդեպ։

* * *

Ընդհանուր ակնարկ նետելով Նազարյանի նամակների բովանդակության
վրա այժմ անդրադառնանք այն հարցերից մի քանիսին, որոնք դրսևորում են
նրա աշխարհայացքի կարևոր գծերն իրենց պրոգրեսիվ տենդենցների և միա-
ժամանակ հակասությունների մեջ։ Դրանցից մեկը լուսավորական պրոպագան-
դայի և աշխարհարարի հարցն է։

Լուսավորությունը Նազարյանի նամակների հիմնական ատաղձն է, որի
վրա են կառուցված նրա բոլոր խոհերն՝ անձնական թե հասարակական։
Պատանեկության տարիներից նա երազել է սովորել՝ ժողովրդին սովորեցնելու,
նրան լուսավորելու նպատակով։ Մեզ հայտնի է, որ Ներսիսյան դպրոցում եղած
ժամանակ նա նամակագրություն է ունեցել Խ. Աբովյանի և մյուս դասընկերների
հետ։ Այդ նամակները մեզ չեն հասել։ Ա. Արարատյանի բանաստեղծություն-
ների անտիպ ժողովածուի մեջ մենք հանդիպեցինք հեղինակի ձեռքով արտա-
դրված մի նամակի, որի տակ գրված է Ս. Նազարյանի անունը։ Նազարյանի
այդ նամակն ուղղված է իր մեկենասներից մեկին և ամփոփում է պատանի հայ-
րենասերի վաղ կյանքի էջերից մի դրվագ։ Պարզվում է, որ նա պատանեկու-
թյան օրերին ունեցել է «դառնաղետ վիճակ», «լեղուախառն օրեր», իսկ այժմ
բացվել է «նորահրաշ առավոտը», և նա գիտե, որ իր մեկենասը պիտի զարմա-
նա, թե ինչպես է նա համարձակվում «աղոտ լապտերի ի գլուխ բարձրավան-
դակ լեռին ջանալ վերհանել», երբ «չունի ամենևին թևս կհանդգնի ճախրել ի
բարձունս երկնից»։ Պարզվում է, որ նրան խոստացել են ուղարկել կրթության և
կարմանում են նրա մեծ ծրագիրների և երազանքների վրա։ Թե ինչով են վեր-
ջանում այդ խոստումները, մենք չգիտենք։ Հայտնի է, որ Աբովյանը Դորպա-
տից կանչում է Նազարյանին և նա 1832 թ. մեծ ապրումներով, առանց մտա-
ծելու իր ապրուստի մասին գնում է Դորպատ։ «Քո տողերի յուրաքանչյուր բառը

կարդացի համբուրելով. գրում է նա Արովյանին Թիֆլիսից, տեսնելով նրա մեծ ուսման վաղեմի սիրահարիս ջերմաջերմ բաղձանքներիս կատարումը»[3]։

Զրկված լինելով, սեփական պետության չգոյության պայմաններում, հայերի քաղաքական-լուսավորական կյանքը կազմակերպելու հնարավորությունից, Նազարյանը, գործունեության առաջին իսկ քայլերն անելիս, իր ուշադրությունն է ուղղում Մոսկվայում և Պետերբուրգում ապրող հայ մեծահարուստների վրա, այն միամիտ ակնկալությամբ, թե նրանք կարող են հայությունը փրկել անխուսափելի կործանումից, դնելով նրան լուսավորության զարգացման իսկական ուղիների վրա։

1841 թ. Ներսես Աշտարակեցուն ուղարկած իր նամակում Նազարյանը խոսում է Պետերբուրգի մեծահարուստներից ստացած իր տպավորությունների մասին։ «Ցավ է ասեմ, գրում է նա, զի թե թանձր խավար տգիտութեան պատեալ պաշարեալ ունի զսիրտ և զմիտս մերայնոց»[4]։ Նազարյանի կարծիքով նրանց ստացած կրթությունը նպատակ չունի խորամուխ լինել «լուսավորութեան գեղեցիկ խորհրդին» մեջ։ «Հունձք բազում մշակը սակավ»,— եզրակացնում է նա Աշտարակեցուն՝ ակնարկելով մեր ժողովրդի հոգևոր զարգացման համար ստեղծված պատմական նոր պայմանները, միաժամանակ այն մարդկանց պակասը, որոնք պետք է լուսավորականություն տարածեն ժողովրդի մեջ։

Նազարյանն առաջինն էր, որ Արովյանի հետևությամբ զարգացրեց և կյանք մտցրեց այն հիմնական հարցերը, որոնք պետք է օգնեին հայության քաղաքական, լուսավորական գաղափարների զարգացմանն ազգային շարժման մեջ։ Առաջին հարցը, որ զբաղեցնում է նրան, լուսավորված կադրեր ստեղծելու հարցն էր։ Նա Աշտարակեցուն առաջարկում է բացել բարձրագույն ուսումնական մի հաստատություն՝ «վերին դպրոց» և այնտեղ պատրաստել քսանի չափ տաղանդավոր պատանիներ՝ գիտության տարբեր բնագավառների համար։ Այնուհետև ստեղծել դպրոցներ, կազմակերպել ընկերություն ու նրա միջոցով ապահովել մանուկների համար դասագրքերի և օժանդակ գրականության պատրաստման գործը։ Իսկ ինչ վերաբերում է նյութական միջոցներին, Նազարյանն Աշտարակեցուն ուղղակի առաջարկում է կազմակերպել հանգանակություն ոչ թե անհատներից, այլ ամբողջ «ազգից»։ Ազգը ունի 4 միլիոն անդամ։ Նրա կարծիքով եթե ժողովրդական կրթության կազմակերպման գործին մասնակից դառնա 2 միլիոնը, ապա լուսավորության գործը հայերի մեջ կունենա իր հաջողությունը։ Նազարյանի նամակը մնում է անպատասխան, բայց նա չի դադարում ազգը լուսավորելու իր նվիրական գաղափարից։

1846 թ. հրատարակած ռուսերեն աշխատության մեջ նա հանդես է գալիս լուսավորական գործունեության մի ամբողջական ծրագրով։ 1840-ական թվականների դա առաջին տպագիր փաստաթուղթն է, որի մեջ արտացոլվում են ժամանակի հրատապ հարցերը։ Նազարյանը իլուր բոլորին հայտարարում է, որ լուսավորությունը պետք է դառնա ժողովրդի սեփականությունը։ Իսկ այդ կարող է դառնալ միայն այն դեպքում, եթե նա ազատագրվի կղերա-ավատական մտայնության տիրապետության կապանքներից։ Իսկ դրան հասնելու համար հարկավոր է. 1. Վերցնել ժողովրդական լուսավորության գործը հոգևորականների ձեռքից և հանձնել աշխարհիկ մարդկանց, տալով այդ գործին պետա-

3 Դիվան Ե. Արովյանի, 1940, հ. 1, էջ 249։
4 «Արձագանք», 1896, № 112։

կան-քաղաքական նշանակություն։ 2. Մերժել գրաբարը իբրև գրականության մեջ տիրապետող լեզու և փոխարենը բարձրացնել աշխարհաբարը, իբրև հիմք գրական նոր լեզվի։ 3. Այդ ճանապարհով ստեղծել ազգային գրականություն և մոտեցնել նրա մեջ արծարծվելիք խնդիրները ժողովրդի պահանջներին։ 4. Հնարավորություն տալ ժողովրդին ճանաչելու ոչ միայն սեփական կյանքը և նրա արդիական պահանջները, այլև հաղորդակից դառնալ եվրոպական քաղաքակրթությանը, նրա օգնությամբ զարգանալու և բարելավելու սեփական կյանքի պահանջները։

Այս հարցերն իրենց լայն մեկնաբանությունն ու զարգացումն են գտնում Նազարյանի այդ շրջանում գրած նամակների մեջ։ Զրկված լինելով տպագիր օրգանի միջոցով իր գաղափարները տարածելու հնարավորությունից, Նազարյանը նամակներ է գրում հասարակական տարբեր խավերի պատկանող գործիչների, դրանց թվում և վաճառականների։ Ահա 1847 թ. Աստրախանցի հայ վաճառական Պոպովյանին գրած նամակը։ Աշխարհաբար լեզվով գրված և դեռևս անտիպ այս նամակում 1840-ական թվականների լուսավորիչը մեծ խանդավառությամբ խոսում է լուսավորության և նրա զարգացման անհրաժեշտության մասին։ Ո՞ւմ պետք է վստահել լուսավորության գործը։ Հոգևորականների՞ն։ Նազարյանը պատասխանում է. Ո՛չ, «այդպիսի սևավեղար խարերա անուսումն մարդկերանց հավատք արժան չէր ունենալ»[5]։ «Հայոց ազգի ճրագը մեր մարմնապաշտ և խավարասեր և անուսումն հոգևորականներից ծագելու չէ իսկի,— գրում է նա նույն տեղում։ —Եթե հույս կա աշխարհականներից կա, հայտնի բան է լուսավորյալ աշխարհականներից»։ Նույն նամակում մի ուրիշ տեղ նորից ընդգծում է. «Ասացի ձեզ, մեր ճար ու դեղը ազգի լուսավորյալ որդիներն են և ոչ մեր հոտած ու փտած ապականյալ սևավեղարները»։

Մատենադարանի կաթողիկոսական ֆոնդերից մեկում պահված մի նամակից երևում է, որ հայ վաճառական Ջանում Ստեփանյանը խնդրել է Ն. Աշտարակեցուն Նիժնի Նովգորոդի հայ եկեղեցուն իր նվիրած գումարը հատկացնել Աստրախանում հայոց դպրոց կառուցելու գործին։ Բացի այդ՝ նոր կառուցելիք դպրոցի տեսչությունը հանձնել Ստեփանոս Նազարյանին և հնարավորություն տալ նրան կազմակերպելու նաև տպագրության գործը։

Այդ շրջանի Աստրախանի հոգևոր առաջնորդներին գրած նամակներից երևում է, որ Նազարյանը ցանկություն է ունեցել գնալ Աստրախան, կազմակերպել բարձրագույն ուսումնական հաստատություն՝ «մասնավոր ինստիտուտ» և Աստրախանը դարձնել հայ լուսավորական օջախներից մեկը։ Նույն շրջանի այլ նամակներից երևում է, որ նա խնդրել է հայ մեծահարուստներին, Աշտարակեցուն, իշխան Վորոնցովին, օգնել իրեն՝ հայկական բնակավայր ընկնելու կամ հայրենիք վերադառնալու։ Նազարյանին այդ չի հաջողվում։ Սակայն նրա ձայնը հասնում է հայրենիք։ Արովյանը կանչում է նրան մասնակից լինելու իր նախաձեռնած գործունեությանը ազգօգուտ նպատակով։ Նազարյանի նամակներում արտացոլվում են երկու բարեկամների գաղափարների և գործելակերպի ընդհանրությունը։

* * *

1840 թվականին Զմյուռնիայում, իսկ 1843-ին Վենետիկում, աշխարհաբար լեզվով հրատարակվում են «Արշալույս Արարատյան» և «Բազմավեպ» պար-

5 Գրականության և արվեստի թանգարան, Ծատուրյանի ֆոնդ, № 693։

բերականները։ Խոսելով «Բազմավեպի» խնդիրների մասին, նրա հրատարակիչը գրում է. «Մեր նպատակը չէ գրաբարը դնել մի կողմ և աշխարհաբարը զարգացնել, այլ գրաբարը զարգացնելու դյուրին միջոցը գտնել»[6]։ Արևելահայ հատվածում նույնպես կային նման ձևով մտածողներ։ Դա մի ճարպիկ շրջանցում էր, որ ցանկանում էին կատարել Սխիթարյանները, նոր բարձրացող ժողովրդական զարթոնքի և նրա պահանջների առջև։ Աշխարհաբարը այդ պահանջների իրականացման առաջին բանալին էր։ Դեռ նախորդ դարերից բանաստեղծների և աշուղների մի ամբողջ սերունդ աշխարհաբար լեզվով արձագանքել էր հայության պատմական ճակատագրին և մարդու հասարակական զարթոնքին։

1839 թ. առաջին անգամ Խ. Արովյանը իր «Նախաշավիղ» գրքի գերմաներեն առաջաբանում ձևակերպեց աշխարհաբար լեզվի անհրաժեշտությունը պատմական նոր կյանք մտած հայության համար։ Նա գրեց իր հռչակավոր «Վերք Հայաստանին», որի մասին Ս. Շահազիզն իր «Հրապարակախոս ձայն» աշխատության մեջ գրում է, որ «Հայոց ժողովուրդը առաջին անգամ լսեց յուր հարազատ ձայնը յուր ցավին ցավակից Արովյանից»[7]։

Նազարյանն առաջինն էր, որ անմիջապես արձագանքեց Արովյանին և իր գործունեության առաջին իսկ տարին հանդես եկավ աշխարհաբարի դատի պաշտպանությամբ, այն գրական լեզու դարձնելու պահանջով։ Այս նկատի ունենալով Ս. Շահազիզը նույն տեղում գրում է. «Արովյան ու Նազարյանց, Նազարյանց ու Աբովյան մեր աչքում համասեռ բաներ են։ Երկուսի ևս նպատակը միևնույնն է։ Երկուսը ևս մկրտված են մի իմացական ավազանում։ Երկուսը ևս այլ և այլ ճանապարհներով ծառայել են միևնույն հավիտենական ճշմարտության։ Նորը պիտո է ծաղկի»[8]։

Նազարյանի Կաղանյան շրջանի գործունեության առաջին արտահայտությունը եղավ այն, որ նա տպագրելու նպատակով գրեց մի աշխատություն աշխարհաբար լեզվով և հանձնեց ուսումնական օկրուգի քննությանը։ Աշխատության վերնագիրն էր «Ընդհանուր պատմության անցքերի շուրջը» կամ «Համաշխարհային պատմություն»։ Աշխատությանը կցված դիմումի մեջ Նազարյանը նշում է, որ ինքը ձեռնարկել է այդ գործը, նպատակ ունենալով հանրամատչելի ձևերով հաղորդելու ժողովրդին ինչպես Եվրոպայի, այնպես էլ հայոց պատմության կարևոր դրվագները։ Ուսումնական օկրուգը նույն բացատրություններով աշխատությունը ուղարկում է Լուսավորության մինիստրություն, որը գրախոսության համար այն հանձնում է ակադեմիկ Բրոսսեին։ Ակադեմիկ Բրոսսեն Նազարյանի գիտական զեկավարներից էր Պետերբուրգում և նրա աշխատանքների մասին, այն ժամանակ, տվել էր փայլուն գնահատական։ Նորահայտ նյութերից պարզվում է, որ այդ նույն Բրոսսեն այս անգամ տալիս է միանգամայն աննպաստ կարծիք, որով և խափանվում է Նազարյանի աշխատության տպագրությունը։ Սակայն ո՞րն էր պատճառը։ Այստեղ օգնության են գալիս Նազարյանի նամակները։ 1845 թ. նոյեմբերի 10-ին Արովյանին գրած նամակում կարդում ենք. «Ցանկալի է, որ սիրելիդ իմանար, թե ի՞նչ վերջ ունեցավ իմ համաշխարհային պատմության փոքրիկ տեսությունը, որի մասին դու ասում ես, թե կարդացել ես Ռուսաստանի լուսավորության նախարարության օրագրի մեջ, և այդ իմ չնչին երկասիրությունը, որ հարմարեցրած է մեր հայրենակից մանուկ-

6 «Բազմավեպ», 1843, էջ 108։

7 Ս. Շահազիզ. Հրապարակախոս ձայն, 1881, էջ 37։

8 Նույն տեղում։

ների պիտույքին, մնում է մինչև այսօր, ուր որ կա, որովհետև ռուսաց վեհապատիվ ճեմարանն անարժան համարելով, քանի որ դա միայն պիտանի էր հայերին, և ոչ, ինչպես ասում են «գիտությանը, որին նա այսպես ասած պիտի հպատակ[illegible]» մատնված է խորին մոռացության»։ Խոսքն ուղղելով ակադեմիկ Բրոսսեին, Նազարյանը բարկացած բացականչում է. «չեն և չեն բնավ մտածում այս անմիտ և խելացնոր ուսումնականները, որ ավելի ևս հեշտ կլիներ ինձ համար երկասիրել մի կատարյալ գիտական գործ, քան թե մանուկների ընթերցանության համար, ինձ համար, ասում եմ, ում մատչելի են Եվրոպայի շատ գիտական պատմական աղբյուրներ, բայց դրանից ի՞նչ օգուտ մերայնոց։ Այդպիսիների հետ չարժե վեճի ու կռվի բռնվել, որովհետև դրանք մտածում են ոչ հայերի լուսավորության մասին»[9]։

Նազարյանը նկատի ունի Բրոսսեի դրախոսականը, որտեղ նա հայտարարում է, թե Նազարյանի այդ գործը գիտական արժեք չունի։ Սակայն դա միայն արտաքին պատճառաբանությունն էր։

Անդրադառնալով իր աշխատության խափանման բուն պատճառին՝ Նազարյանը գրում է. «Ս. Պետերբուրգի ճեմարանը միշտ հակառակ գիտի լինի ինձ և բեղ և այդ բնական է։ Հայոց լեզուն կարոտ չէ վերանորոգության. ի՞նչու համար, ասում են, թողնել նախահայրերի ականավոր լեզուն և ձգտել հարուցանել և գրական լեզուն դարձնել ժողովրդի գոնհիկ լեզուն, մի խոսքով, ի՞նչու բանալ ժողովրդի աչքերը, որ նա տեսնի և որ նա պարտական է տեսնել»[10]։ Ուրեմն աշխատությունը չի տպագրվել, որովհետև այն աշխարհարար լեզվով էր գրված։ Նույն նամակից երևում է, որ իր գրքի հրատարակության խափանման առթիվ Նազարյանը գերմաներեն լեզվով մի ճառ է գրել և ուղարկել Պետերբուրգի գիտությունների ակադեմիային։ Իր ճառը նա վերնագրել է «Մի հայացք Հայաստանի ներկայի և ապագայի մասին հոգևոր տեսակետից»։ Այստեղ, ինչպես ինքն է ասում, շոշափել է հայ ժողովրդի քաղաքական հոգևոր գարթոնքի հարցերը կապված ժողովրդական լեզվի զարգացման հետ։

Նազարյանի գործունեության մեջ 1840-ական թվականները նշանավորվում են աշխարհարար լեզվի համար նրա մղած կենդանի պայքարով։ 1846 թ. իր մի աշխատության մեջ նա գրաբարը հրապարակորեն հայտարարում է մեռած լեզու և աշխարհարարս ազգարարում իբրև ազգային-ժողովրդական գրականության զարգացման և ժողովրդական մտածողության դրսևորման գլխավոր պայմանը։ «Էն լեզուն որ ուսման ճանապարհ չէ, գրում է նա 1850 թ. Գ. Սուլթանյանին ուղղած նամակում, էն լեզուն որով ոչ մտածել և ոչ խոսել կարող է երեխան, էն լեզուն ինչպե՞ս լուսավորության պատճառ լինի։ Մեր պատվական հայերը ամեն բան խառնոշտորել և ազցան են շինել. ասա ինչքան կամենաս, ճանապարհ ցույց տուր, գրիչ խաղացրու, բոլորը, բոլորը կուր ջան է, անօգուտ վաստակ»[11]։

Աշխարհարարի շուրջը մղված պայքարի հետաքրքրական վավերագրերից է Նազարյանի 1854 թ. գրած նամակը Խ. Լազարյանին «Հանգես նոր հայախոսության» գրքի առաջին հատորի տպագրության առթիվ։ Բազմակողմանիորեն հիմնավորելով աշխարհարարի տիրապետության անհրաժեշտությունը, նա հենվում է եվրոպական ժողովուրդների աշխարհարար լեզուների զարգացման պատ-

9 Դիվան Խ. Աբովյանի, 1940, հ. 1, էջ 259։
10 Դիվան Խ. Աբովյանի, 1940, հ. 1, էջ 260։
11 «Նոր հոսանք», 1913, № 4—5, էջ 910։

մության հայտնի փաստերի վրա և վճռականորեն հայտարարում, որ «մինչ այժմ ես գրել եմ այդ սակավիմաց հասարակության համար, այսինքն 1/400000-ի համար և նույնիսկ Ռուսաստանում ապրող հայերի 1/2 400000-ի համար։ Բայց գրել մի ինչ որ 10—20-ի համար, որոնք նվիրել են իրենց հայկական հիերոգլիֆ-ներին, դա ես համարում եմ չմտածված կորուստ ժամանակի, աննպատակ աշխատանք»[12]։

1853 թ. Մոսկվայում աշխարհարար լեզվով լույս են տեսնում Նազարյանի երկու աշխատությունները։ Այնուհետև դրանց հետևում են «Հանդես նոր հայախոսության» երկու հատորները։ Նազարյանի գործերին զուգընթաց հրատարակվում են Գամառ-Քաթիպայի «տետրակները» և այլն։ 1850-ական թվականների առաջին կեսին աշխարհաբար լեզուն մուտք է գործում արևելահայ իրականության մեջ։ Նազարյանի մի տասնամյակից ավելի մղած բուռն պայքարը աշխարհարարի իրավունքների համար պսակվում է հաջողությամբ։ Աշխարհարար լեզվի հաղթանակով փլուզվում է կղերա-ավատական մտայնության գլխավոր հիմքը կազմող գրաբարի իշխանությունը։ 1858 թ. հրապարակ է գալիս «Հյուսիսափայլ» ամսագիրը, որով և սկսվում է դաղափարական ուժեղ պայքար աշխարհաբարը կյանք մտցնելու և գրական մշակման ենթարկելու համար։ Այս պայքարում Նազարյանի կողքին առաջատար դեր է կատարում «Հյուսիսափայլի» գլխավոր աշխատակից Մ. Նալբանդյանը։

* * *

Նազարյանի նամակները թափանցված են դառն իրականության քննադատությամբ։ Այստեղ մենք հանդիպում ենք նրա տարբեր տրամադրություններին՝ բարկության, հիասթափության, հուզմունքին։ Այս բոլորի հիմքում արտացոլված է նրա բուռն ձգտումը դուրս բերել ազգը ֆեոդալական բռնության կապանքներից, լուսավորել նրան, հաղորդակից անել եվրոպական քաղաքակրթությանը։ Նազարյանը երազում էր մի հասարակարգ, որտեղ հարուստները մեծահոգաբար օգնեն աղքատներին, հոգևորականները լուսավորությունը և դիտությունը հարմարեցնեն քրիստոնեական մորալին և տիրապետող աստվածասիրության հետ միասին լինի ազնվությունը, ճշմարտությունը։ 1840—60-ական թվականների լուսավորչի այս երազանքները աստիճանաբար փլվում են նրա գործունեության առաջին իսկ քայլերից։ 1840—50 թվականների հասարակական բուռն բախումների մեջ նա նկատում է այն հակասությունները, որոնք գոյություն ունեն նրա և ժողովրդի շահերի մեջ, տեսնում անջրպետը նրա և ցարիզմի, նրա և կղերա-աղայական դասի միջև։ Սակայն այդ հակասությունները նա դիտում էր իբրև անհատների, լավ կամ վատ բնավորությունների արտահայտության և ոչ թե բուրժուազիայի զարգացման ներքին օրինաչափություն։

1866 թ. Նազարյանը ճանապարհորդություն է կատարում դեպի Կովկաս։ Նա լինում է Նոր Նախիջևանում, Ռուսաստանի հարավի հայաբնակ վայրերում, Թիֆլիսում և Հայաստանում։ Երկրորդ անգամ երկու տարի ապրում է Թիֆլիսում և մոտիկից ականատես է լինում հայ ժողովրդի կյանքի պայմաններին, խորհում իր սերմանած դաղափարների, իր երազանքների և գոյություն ունեցող

12 Լենինգրադի Պետ. Կենտ. արխիվ, ֆ. 880, ց. 5, գ. 225։

իրականության մասին։ Իր բոլոր եզրակացությունների մեջ լուսավորիչը շնաչած մնում է նույն իդեալիստը, բայց նրա հոգում կուտակվում է մեծ դառնություն այն խավերի հանդեպ, որոնց միջոցով նա հույս ուներ վերափոխել ժողովրդի կյանքը։ «Շատ բան հեռվից տեսած պսպղուն ու գրավիչ է,—գրում է Նազարյանը Թիֆլիսից Քանանյանին,— բայց որ մոտիկից քննում ես, ոսկի կարծեցածդ ստուգվում է մի շատ հասարակ մետաղ»։ 1870 թ. սեպտեմբերի 4-ին Սալթիկյանին նա գրում է. «Հասարակ ժողովուրդը աղքատության անդունդին մեջ կորած ապրում է ամենևին թշվառաբար, հին պապական և մայրական շավիղներից ոչ մի քայլ առաջ չգնացած։ Այստեղ կան մի տեսակ աղքատք, որ գրեթե մերկ ման են առնում փողոցի մեջ։ Թիֆլիսյան հարստությունը կարող չէ կաշառել իմ աչքը»[13]։ Մի ուրիշ նամակում նա հուսահատված գրում է. «Սեր առ մարդ և առ աստված, ընկերսիրություն և աստվածսիրություն վերացած է այստեղ. աղքատը չափից դուրս անրախտ, հարուստը չափից դուրս բախտավոր։ Ոչինչ բարեգործության դաղափար չկա, որովհետև ոչինչ՝ հասարակաց օգտի դաղափար»[14]։ 1871 թ. փետրվարի 2-ի նամակում նա պատմում է Փանյանին, որ «Մոսկվան դրախտ չէ, բայց Թիֆլիսը մի դժոխք է, ժողովրդի թշվառությունը և աղքատությունը մի ողորմելի տեսարան, որում կարող չէ տանել ոչինչ ցավակից սիրտ»[15]։

Այս բոլորից հետո Նազարյանը գալիս է այն եզրակացության, որ քանդվում են ազգային տրադիցիաները, քայքայվում նահապետական բարքերը։ Ասիական հնամենի ձևերի վրա խայտարղետ կարկատանի նման սկսում են երևալ եվրոպական քաղաքակրթության կեղծ ընդօրինակումներ։ Հայ հասարակական պրոգրեսի նկատմամբ մեծ երազներով տոգորված Նազարյանը զարմացած ականատես է լինում այն փոփոխություններին, որոնք տեղի էին ունեցել վերջին 40 տարիների ընթացքում։ «Թիֆլիսը կիսով չափ եվրոպական ցիվիլիզացիայից շոշափված քաղաք է և այն արտաքուստ,— գրում է նա Փանյանին։— Մարդիկ ըստ մեծի մասին, մնացած են ներքուստ միևնույն ասիական բարբարոսք. մոտավորություն ոչ մինի հետ կարելի չէ ունենալ, բարեկամություն ևս ավելի սակավ. առանձնության ոգին, ինչպես Մոսկվայի, Նախիջևանի մեջ տեսած եմ ևս, ոչ մինը յուր ընկերի ցավին և ուրախությանը մասնակից չէ»[16]։ «Թիֆլիսը. մի չոր ցամաք ու անհոգի քաղաք է» ասում նա մի ուրիշ նամակում։

Նազարյանը կորցնում է մարդու նկատմամբ իր ունեցած վաղեմի պատկերացումը։ 1871 թ. մարտի 21-ի նամակում. նա գրում է, որ բնության այն գեղեցկությունը, որով հիանում էր անցյալում, այժմ այն չէ իր աչքին, քանի որ մարդը այդ բնության ֆոնի վրա կորցրել է իր հմայքը։ Նա տեսնում է, թե ինչպես այլևս չկա խիղճ, պատիվ, կարեկցություն, ազնիվ զգացողություն, որ մարդիկ «փակում են ամենայն լավ և պիտանի բանի ճանապարհ, կործանում են ամենայն գեղեցիկ, օգտակար սկսվածք. այստեղ, ոչինչ է մի մարդու բարի կամք. մի մարդու բոլոր ուժը և զորությունը»[17]։ «Բայց այժմ որոնում եմ մարդը, որը զարդարում էր բնությունը, ամենայն բան շինելով և բարեկարգելով նորա մեջ.

---

13 «Տարազ», 1900, № 9, էջ 115։
14 «Արարատ», 1914, № 6, էջ 545։
15 «Արարատ», 1914, № 9, էջ 829։
16 «Արարատ», 1913, № 10, էջ 928։
17 «Արարատ», 1914, № 11, էջ 1038։

բայց այդ մարդը ես գտանում չեմ»[18]։ Նաղարյանը տեսնում է, որ ազգը պառակտված է, որ չկա ազգային առաջադիմություն, որ ամեն ինչ դրված է խախուտ դիրքերի վրա, որ «երկաթե գլուխ և ադամանդյա լեզու է հարկավոր, որ այստեղ որևիցե առաջադիմության գործ հաջողություն գտանե»[19]։ Թիֆլիսում ապրած տարիներին Նաղարյանը այն աստիճան է հուսախաբվում, որ մնում էր միայն դառնացած գոչել. «Ո՜հ, իմ հայրենասիրությունը, իմ հայրենասիրությունը, որով միայն մոլորված և հափշտակված ես ձգեցի իմ անձը այս խորխորատի մեջ»։

Խորը հիասթափության հետքեր ենք գտնում նաև հոգևորականության նկատմամբ նրա արտահայտած կարծիքների մեջ։ Մեզ հայտնի է, որ Նաղարյանը սկզբից ի վեր կարևոր նշանակություն է տվել կրոնին։ Բայց կյանքն առաջին իսկ օրից նրան հուշել է հոգևորականության ունեցած բացասական դերի մասին և նա անխնա մերկացրել է հոգևորականության արատները։

Սակայն նա առանձին վերաբերմունք է ունեցել հոգևոր իշխանության նկատմամբ, հետևողականություն չի ունեցել կրոնավորների դեմ մղվող պայքարում։ Պետության բացակայության պայմաններում նա այն դիտել է իբրև հայությունը միավորող և նրա քաղաքական ուժերը համախմբող, ժողովրդի նկատմամբ իր դերն ունեցող բարձրագիր իշխանություն։ Այս տեսանկյունից էլ նա քննադատել է կաթողիկոսների քաղաքական գործունեությունը և մերկացրել նրանց անտարբերությունը և հակաժողովրդական գործունեությունը։ Նամակներում ցայտուն արտահայտություն են գտել նրա մոտ եղած այդ մտքերը։ Դժգոհ լինելով կաթողիկոսական նոր ընտրություններից, Մ. Նալբանդյանին ուղղված նամակում 1865 թ. նա գրում է. «Ո՞րպես կընթանան հայք այսուհետև, որպիսի՞ կաթողիկոս կընտրեն յուրյանց համար, ես ոչինչ հուսալու չունիմ դորանից, որովհետև մի ընտրություն առանց ստույգ վերահասության ընտրելի անձի արժանավորության, ինչպես միշտ եղած է մեր ազգի մեջ և կլինի, երբեք կարող չէ մի բարի հետևանք ունենալ. բայց եթե ընտրողք տերությունն է ազգի քամակում և ազգի անունով այնուհետև ինձ ու քեզ ինչ»[20]։

Փիլիպոս Վարդանյանին գրած մի նամակում նա անվերապահորեն սահմանազատվում է հոգևոր դասից։ «Պիտո է վերջապես հասկանալ,— գրում է Նաղարյանը,— որ մեր գնալի ճանապարհը, որ երթում է մեր հոգևոր դասը, այսինքն բոլորովին հակառակ նոցա ճանապարհին։ Մեր և նոցա մեջ չկա ոչինչ հասարակաց բան, նոքա որդիք խավարի, մենք Եվրոպական լուսավորության և պրոգրեսի աշակերտք»։ Նաղարյանը նորից հաստատում է իր վաղեմի միտքը, որ հայ եկեղեցու վարչական ղեկավարության սահմանած դոգմաները և այն սրբագործող ռեակցիոն գործիչները երբեք չօգնելով այժմ էլ խանգարում են ազգի ներքին կյանքի զարգացմանը։

Այդ կապակցությամբ հետաքրքրական է Նաղարյանի մի շարք անտիպ նամակների մեջ Ռ. Այվազովսկուն տրված գնահատականը։

Հայտնի է, որ Այվազովսկին լիակատար պարտություն կրելով Մաթեոս կաթողիկոսից, նրա հաջորդի օրով աշխատում էր վերականգնել իր նախկին դիրքը և դրավել Թիֆլիսի հոգևոր թեմի առաջնորդի պաշտոնը։ Նաղարյանը 1865 թ. սեպտեմբերին Նալբանդյանին ուղղած նամակում Այվազովսկու պար-

18 Նույն տեղում, էջ 1037։
19 «Արարատ», № 9, էջ 824։
20 «Լումա», 1904, № 6, էջ 167։

տության առթիվ գրում է. «Սատակեցավ Այվազը»։ 1867 թ. հուլիսի 8-ի մի նամակից երևում է, որ նա պահպանել է նախկին կարծիքը Այվազովսկու մասին։ Նորընտիր կաթողիկոսի՝ Այվազովսկու նկատմամբ հովանավորություն ցույց տալու տրամադրությունների առթիվ նա նշում է, որ չնայած Այվազովսկին գիտե լեզուներ և տգետ հոգևորականների կողքին գիտուն է երևում, բայց իրականում «գիտության մասին շատ ոտարոբիկ է, արեղա է և արեղայական հայացքով մարդ, սնած և դաստիարակված ֆանատիկյան կաթոլիկյան հոգով, որ դժվար է այնուհետև ճնշել յուր մեջ, թեև պատկանում է մեր եկեղեցուն։ Աստված տա, որ նա մի բան ուսած լինի ժամանակի դպրոցում և իմանա, որ մեր օրերում ֆանատիկյան հալածասիրությամբ և քարոզությամբ և նեղսրտությամբ ոչինչ կարելի չէ առաջացնել, որ պիտո է միտ դնելով ազգային օգտին, ջանալ տարածել հայերի մեջ ազատ և առողջամիտ հայացք և ուղղություն դեպի այժմյան եվրոպական աշխարհատեսությունը ... Այվազի մասին պիտի ասել գովասանությամբ, որ ունի նույնպես կամքի արիություն, միայն թե տեսությունը պղտոր, արեղայական լինելով, այլև շրջանափակ, մինչև այժմ չէ կարողացել նա պտղարերել ոչինչ դրականապես պիտանի գործ»[21]։

Նազարյանի նամակները երևան են հանում մեծ լուսավորչի քաղաքական հայացքների սկզբունքայնությունը և նրա պրոգրեսիվ նշանակությունը XIX դարի վերածնության ժամանակաշրջանի հայ հասարակական կյանքում։ Այդ նամակներում արծարծվում են բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերվում են ազգային քաղաքական կյանքի կազմակերպման, դաստիարակության, վաճառականներին կրթելու, հոգևորականներին վերափոխելու, ազգը լուսավորելու և այլ խնդիրներին։ Դրանցում արտացոլված են Նազարյանի կարծիքները ցարիզմի գաղութային քաղաքականության, հայ ժողովրդի պատմական ճակատագրի, ազգային ինքնուրույնության, եվրոպական ցիվիլիզացիայի և այլ հարցերի շուրջը։ Նազարյանի նամակների մեջ ուշադրության արժանի է նաև մի շատ կարևոր հանգամանք, որը վերաբերվում է Նազարյանի և Նալբանդյանի փոխհարաբերության հարցին։ Այս մասին եղել են տարբեր կարծիքներ. Նալբանդյանին վերաբերվող ուսումնասիրությունների մեջ հանգամանորեն ներկայացված է նախահյուսիսափայլյան շրջանում Նազարյանի և Նալբանդյանի սերտ համագործակցությունը և արված են հիշատ եզրակացություններ։ Նազարյանի նամակներում ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ այդ համագործակցությունը շարունակվում է հետագայում ևս, այնքան, որքան «Հյուսիսափայլը» մինչև վերջն իր քաղաքական սկզբունքայնությամբ և մարտունակությամբ մի նշանախեց անգամ չի զիջել այն դիրքերը, որոնց վրա կանգնած էին ֆեոդալիզմի և նրա դաղափարախոսության դեմ համատեղ պայքարող Նազարյանը և Նալբանդյանը։

Հայտնի են «Հյուսիսափայլի» հրատարակության առաջին տարում կղերապետական կլիկի կողմից կազմակերպված հարձակումները ամսագրի և նրա գլխավոր աշխատակիցների դեմ։ Այդ Նազարյանն ու Նալբանդյանը կանխատեսում էին դեռ մինչև ամսագրի երևան գալը։ 1858 թ. սեպտեմբերի 30-ին Սուլթանյանին ուղղած նամակում, Նազարյանը գրում է. «Այժմ բացահայտ պիտի լինի ժողովրդին, թե ինչպես է մեր ազգային «Հյուսիսափայլ» օրագրի

21 Գրականության և արվեստի թանգարան, Ռ. Ս. Գրիգորյանի ֆ., № 46։

խորհուրդը. և ի՞նչ կամի հառաջացնել ազգի մեջ։ Հաճոյախոս լինել մեծատունների՞ն, խաբեբայություն գործել, սուտ ասել, ծաղրացնել ազգի լուսավորության ընթացքը՝ այդ նորա գործը չէ, նա կամի ուղիղն ասել թե՛ մեծի և թե՛ փոքրի, կամի վասն Քրիստոսի ճշմարտության վատամարդի լինել, կամի յուր ազգը սիրել և նորա ճշմարիտ օգտի ընդդեմ ոչինչ չմեղանչել։ Ցավ չէ մեզ, եթե այս կամ այն մարդուն ծանր են թվում մեր խոսքերը. «Հյուսիսափայլը» իրրև դրավոր բերան բարեխիղճ հելլինակների, չկամի ոչ ոքի հաճոյանալ և չէ խընդրում ոչ ոքի շնորհը»[22]։ Նազարյանը գոհ է, որ կատարում է իր պարտքը ազգի առջև, օգնում է նրա վերածննդի գործին։

Բայց այդ այնքան էլ հեշտ չէր կղերա-ավատական կաստայի տիրապետության պայմաններում։ Խ. Լազարյանը առաջինը, Այվազովսկու դրդումով, բացահայտ մարտ է սկսում «Հյուսիսափայլի» դեմ՝ Նազարյանի, այսպես ասած, «պառակտողական» «խռովարար» գծի համար ընդդեմ հայ մեծատունների և կղերի։

Նազարյանի մասին ասվել է, թե նա «Հյուսիսափայլի» տպագրության օրերին ցարական ցենզուրայի նկատմամբ իրրև թե հանդես է բերել հարմարվելու քաղաքականություն և շատ հարցերում ընթացել թույլ դիմադրության ուղիով ի վնաս Նալբանդյանի։ Այդ միտքը ճիշտ չէ։ Նազարյանը որպես «Հյուսիսափայլի» խմբագիր պաշտպանել է «Հյուսիսափայլը», դրա հետ նաև Նալբանդյանի տպագրված և անտիպ հոդվածները պաշտոնական մտայնության որոգայթներից։

Լազարյանին ուղղված 1858 թ. նոյեմբերի 26-ի բացատրական նամակում Նազարյանը մեկ առ մեկ հերքում է «Հյուսիսափայլի» և Նալբանդյանի դեմ Այվազովսկու և Լազարյանի մեղադրանքները։ Նալբանդյանի հոդվածի առթիվ նա գրում է. «Մխիթարի և Մխիթարյանների վերաբերյալ հոդվածը տալիս է ընդհանուր փիլիսոփայական և պատմական տեսություն նրանց կյանքի և նրանց հարաբերությունների մասին դեպի հայոց ազգը և գրականությունը։ «Հյուսիսափայլ» ամսագիրը նպատակ ունենալով միայն ազգի օգուտը և մանուկների դաստիարակությունը, պատմական օրինակներով՝ կատարել է միայն իր բարոյական պարտքը՝ լինել ճշմարտախոս և չժխտել պատմական ճշմարտության սրբությունը»[23]։

Նամակում արված այն ակնարկը, թե «ինքը ուրիշ կերպ է մտածել բան ուրիշները և ուրիշներն էլ նույնպես մտածում են այլակերպ, քան ինքը», վերաբերվում է Այվազովսկուն և նրա կողմնակիցներին։

Նազարյանի վերոհիշյալ նամակին զուգադիպում է ամսագրի 11-րդ ամսատետրակում զետեղված Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը» հոդվածը։ Իշխանություն կա՞ ձեռքումդ, հարուստ ե՞ս,— «Հյուսիսափայլի» դեմ սկսված հալածանքի օրերին գրում է բոցաշունչ հրապարակախոսը Լազարյանների և Այվազովսկիների մասին,— ուրեմն ամենալավ, ամենապատվելի մարդը դու ես հայերի մեջ. Զարկի՛ր, խեղդի՛ր, հալածի՛ր, ինչ կամիս արա, անդատապարտ ես, որովհետև հարուստ կամ իշխան լինելով արդեն քո կողմն ես գրավել Հռոմի պապի անմեղանչականությունը»[24]։

Դեկտեմբերի 6-ին Խ. Լազարյանը ճեմարանի վերատեսուչ Դելյանովին է

22 «Նոր հոսանք», 1914, № 1, էջ 130։

23 «Գրական-գիտական ժողովածու», 1908, էջ 58։

24 Մ. Նալբանդյան, Երկեր, 1913, էջ 268։

ուղարկում մի նոր ամբաստանագիր Նազարյանի դեմ։ «Հայտնի է,— գրում է նա,— որ առաջ էլ հայ ժողովրդի մեջ զանազան դժգոհություններ են հայտնվել պ. Նազարյանցի և նրա ընկերների տարօրինակ գործերի առթիվ։ Բայց երբ նա սկսեց հրատարակել զանազան գրքեր և վիրավորել իր հայրենակիցների ինքնասիրությունը, ու բացի դրանից, երբ լույս տեսավ նրա ամսագիրը, այն ժամանակ բարեմիտ հայերի մեծ մասը՝ հոգևորականներից և քաղաքացիներից, բացարձակ կերպով հայտնում էին իրենց զայրույթը և գանգատները, որոնք այժմ սաստկացան և արդեն հասան կառավարության ականջը։ Մինչև իմ արտասահման գնալս այդ զանազան խնդիրները հասնում էին ինձ, բայց ես համբերությամբ լռում էի և կարծում էի, որ այդ սկզբում խոսքով միայն արտահայտվող որոմները կդադարեն։ Բայց ես սխալվեցի իմ ենթադրությունների մեջ, որոնք առաջ էին գալիս իմ անչափ բարությունից և ներողամտությունից, նույնիսկ չափազանց հովանավորելուց պ. Նազարյանցին, որի մասին ես կարծում էի, թե իբրև արժանավոր և խոհեմ գիտնական կհեռանա այդ անմաքուր և վնասակար թշնամություններից»[25]։

Ի պատասխան այդ ամբաստանագրի Նազարյանը 1858 թ. վերջին համարում ամփոփելով առաջին տարվա արդյունքները, գրում է. «Փույթ չէ հրատարակողին, որ մի քանի կոկորդիլոսք չկարողացան ականջ դնել ճշմարտությանը...» կամ թե՝ «Փութ չէ հրատարակողին, որ չէ դրավել նա այս և այն մասնավոր մեծատունի սիրտը, անուշահոտ խունկ ծխելով նոցա քթին...»[26]։

1859 թ. փետրվարի 11-ին Արել Մխիթարյանին ուղղած նամակում Նազարյանն առանց նշանախեց անգամ դիջելու իր դիրքերը, հայտարարում է. «Ես և իմ բարեկամքը սուրը ձեռքերիս կանգնած ենք անշարժ ու հաստատ. թշնամին տեսանելու չէ մեր քամակը. ունի՞ նա զորություն, թող հանդես դա պատվավոր զենքով և չափե յուր զորությունը մեր հետ»[27]։

Մարտի 4-ին Նազարյանը դրաքննությանը տված իր բացատրագրի մեջ մերկացնում է Այվազովսկու դավադրությունը և ավելացնում, որ մնացած տեղեկությունները կտա Պետերբուրգում գտնվող Նալբանդյանը։ Հայտնի է, որ Այվազովսկու և Լազարյանի միջամտությամբ կառավարության առջև դրվում է «Հյուսիսափայլի» արգելման հարցը։ Նալբանդյանը և Նազարյանը որոշում են ամսագիրը փակվելու դեպքում այն փոխադրել արտասահման։ Նալբանդյանը արտասահմանում էր, երբ դրաքննությունը արգելում է տպագրել նրա պատասխան հոդվածը Պալասանյանի դեմ։ «Ասել է թե,— այդ առթիվ գրում է Նազարյանը Արել Մխիթարյանին 1859 թ. մայիսի 11-ին,— անկարելի էր պաշտպանել մեզ, երբ որ մյուսները զազանաբար հարձակվում էին մեր վրա»[28]։ Արգելված այդ հոդվածը Նազարյանն ուղարկում է իրեն՝ հեղինակին, որ նա տպագրել տա «Արևմուտքում»։

Մայիսի 27-ին նույն անձնավորությանն ուղղած նամակում Նազարյանը գրում է. «Հույս ունեմ, որ նա (Նալբանդյանը — Ռ. Ն.) իր գեղեցիկ և զորավոր ճառը շուտով կտպե մի այլ տեղ և մենք կկարդանք դորան ուր և իցե տպագրած»[29]։ Նազարյանը խորապես հասկանում է այն խոշոր գերը, որ ստանձնել է ինքը հայ իրականության մեջ։

25 «Գրական-գիտական ժողովածու», Թիֆլիս, 1908, էջ 62։
26 Ս. Նազարյան, Երկեր, 1913, էջ 82։
27 «Մուրճ», 1902, № 5, էջ 130։
28 «Մուրճ», 1902, № 5, էջ 131։
29 «Մուրճ», 1902, № 5, էջ 135։

«Թափառական Հրեա»-ի Նալբանդյանի թարգմանության առթիվ գրած հոդվածում Նաղարյանը հայտարարում է, որ սկսվել է պատերազմը և որ պետք է զգաստ լինել այդ պատերազմում ճշմարտությունը պաշտպանելու։

Պայքարի մեջ մտնելով ռեակցիոն դերակշռող ուժի դեմ, նա գրում է. «Մեր ժամանակը պատերազմ է և կարոտ անձնազիր նահատակների, ո՛վ տղամարդ է, ով զգում է յուր մեջ այրական հոգի, որի համար գեռևս կենդանի է հայրենիք ասած բանը, թող ժողովվի ու ամփոփվի յուր զորությունը հանդես մտանելու ու վճռարար գործ կատարելու։ Ամենևին անխտիր, անզգա մնալ անկարելի է. հարկավոր է կուսակցություն կամ աջակողմյան կամ ձախակողմյան դասի հետ։ Լինել ոչ այս և ոչ այն, ոչ միս և ոչ ձուկն, ինչպես ասում է առածը, կորուստ կրերն մեզ ինչպես մինչ այժմ բերել է բազում մասնով և օրինակով»[30]։

Այդ պայքարը նկատի ուներ և Նալբանդյանը, երբ իր «Նկատողություն» հոդվածում գրում էր. «Մեր ազգի մեջ այժմ կան հայացքներ, կան ուղղություն, կան ուրեմն և դրոշակներ, կա պատերազմ»։

«Հյուսիսափայլի» գործունեության առաջին շրջանում Նալբանդյանի և Նաղարյանի քաղաքական համատեղ պայքարն ինքնին դրսևորում է բուրժուական-լուսավորական շարժման և նորածնունդ ռևոլյուցիոն-դեմոկրատական ուղղության առաջադրած գլխավոր խնդիրը ֆեոդալական կապանքները հայկական կյանքի բոլոր բնագավառներում խորտակելու համար։ Դա մի հերոսական ժամանակաշրջան էր, որտեղ առանձին ուժով ընդգծվեց պատմական երկու խոշոր անհատների քաղաքական գործունեության միասնության հսկայական նշանակությունը։ Երկու տարի անց Նալբանդյանը իր հայացքներով և գործունեությամբ արդեն դուրս էր «Հյուսիսափայլի» շրջանակներից և նրան հուզում էին այլ հարցեր, բայց նա գրում էր, որ «մենք միշտ «Հյուսիսափայլի» հետ ենք եղել և կմնանք, Հյուսիսափայլի դավանությունն է և մեր սրտի խոստովանությունը»։ 1860—1862 թթ. արտասահման կատարած ուղևորության ընթացքում Նալբանդյանը «Հյուսիսափայլը» համարել է իրենց «թախտրմի» օրգանը, ուշի ուշով հետևել իր բարեկամի գործունեությանը։ Դրա լավագույն ապացույցն է «Երկու տող»-ում Նաղարյանի առաջադրած եկեղեցական ռեֆորմի նրա կրքոտ պաշտպանությունը։ Նույնիսկ բանտում Նալբանդյանը օգնում է Նաղարյանին շարունակելու ընդհատված «Հյուսիսափայլ»-ը. բավական է նշել այն հայտնի փաստը, որ նրա «Ազգային Բշվառություն» հոդվածը լույս է տեսնում Նաղարյանի ստորագրությամբ։

Նալբանդյանի տված տեղեկություններից մեզ հայտնի է դառնում, որ նա հատկապես արտասահմանից Նաղարյանին գրել է շատ նամակներ, որ դժբախտաբար մեզ չեն հասել։ Չեն հասել և Նաղարյանի պատասխանները։ Դրանք կարող էին նոր լույս սփռել Նաղարյանին և Նալբանդյանին փոխադարձաբար հետաքրքրող հարցերի վրա։

Մեզ հասած նամակները օգնում են բանասերներին վերհանելու մի շարք խնդիրներ, կապված և իրեն Նաղարյանի և նրա ժամանակաշրջանի հետ։ Սույն ակնարկում արծարծված խնդիրները, ինչպես նշեցինք, դեռ լիովին չեն ներկայացնում նամականին։ Նրա հետագա ուսումնասիրությունը հնարավորություն կտա Նաղարյանի էպիստոլյար ժառանգության քննությանն անդրադառնալու ավելի հանգամանորեն։

30 Նույն տեղում, էջ 133։